ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՓՈՐՁ

Սրբուհի Հակոբյանը 2023թ-ի ապրիլից առ այսօր հանդիսանում է Հայաստանի տեղեկատվական համակարգերի գործակալության (ՀՏՀԳ) ֆինանսական տնօրեն: Այս պաշտոնում նա ղեկավարում և համակարգում է գործակալության ֆինանսական ռեսուրսների արդյունավետ և նպատակային օգտագործումը ինչպես նաև ներգրավված է գործակալության գործունեության ղեկավարման և համակարգման գործընթացներում :

Սրբուհին համակարգում է գործակալության տարբեր ստորաբաժանումների կողմից նախաձեռնությունների ֆինանսական մոդելների, բիզնես քեյսերի մշակման և վերանայման գործընթացը, ինչը պահանջում է թվայնացման, տվյալների մշակման և տեղեկատվական անվտանգության ոլորտներում կիրառելի և գործառնական գիտելիքներ:

Ունի ավելի քան 40 տարվա աշխատանքային փորձ մասնագիտական/խորհրդատվական ծառայությունների և ֆինանսատնտեսական ոլորտներում , այդ թվում՝ 20 տարի ղեկավար պաշտոններում:

2006թ-ից մինչև 2022թ. հանդիսացել է Դելոյթ միջազգային կազմակերպության գործընկեր, 2013թ-ին հիմնել է Դելոյթ Արմենիա ՓԲԸ-ն և մինչև 2022թ-ը հանդիսացել է ընկերության տնօրենը, 2020-2022 թթ- ին միաժամանակ հանդիսացել է Դելոյթ Վրաստանի տնօրենը և ղեկավար գործընկերը:

Իր մասնագիտական գործունեության ընթացքում ղեկավարել և համակարգել է Հաշվապահական Հաշվառման և աուդիտորական գործունեության միջազգային ստանդարտների ներդրման և կիրառման գործընթացները ինչպես Դելոյթի տարբեր գրասենյակներում, այնպես էլ տարբեր կազմակերպություններում: Ակտիվորեն համագործակցել է Հաշվապահական հաշվառման և աուդիտի ոլորտներում տարբեր երկրների վերահսկիչ մարմինների հետ այդ ստանդարտների մշակման և կիրառման գործում: 2023թ-ին IFAC -ի հետ համատեղ օգնել է Հայաստանում ներդնել Աուդիտորական ընկերությունների որակի վերահսկման համակարգ և մինչև 2025թ. հանդիսացել է Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատի որակի հանձնաժողովի անդամ:

Ունի կիրառելի և գործնական գիտելիքներ ստանդարտների ներդրման, կիրառման և վերահսկողության ոլորտներում:

ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

Ավարտել է Հայաստանի ազգային ագրարային համալսարանը, Հայաստանի Ամերիկյան համալսարանը:

Ունի տնտեսագիտական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան:

Հայաստանի Հանրապետության քաղաքացի է, ամուսնացած չէ: